



**Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ձևավորած 01-04-2021 - 30-04-2021թթ. տվյալների ամփոփում**

Հաշտարարի գրասենյակը 01-04-2021 - 30-04-2021թթ. ընթացքում ստացել է ընդհանուր քանակությամբ 1,334 բողոք, որից ֆինանսական կազմակերպություններին վերաբերող բողոքները 1,283-ն են:

Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող 1,283 բողոքներից 107-ը համաձայն «Ֆինանսական համակարգի Հաշտարարի» մասին ՀՀ օրենքի, ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից (որոշ պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վճիռ, դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից քննվում է հաճախորդի և Կազմակերպության միջև նույն պահանջի առարկայի վերաբերյալ գործ, պահանջը չի ներկայացվել Օրենքով սահմանված ժամկետներում, Կազմակերպության լիցենզիայի գործողությունը դադարեցվել է և այլն):

Հաշտարարի քննությանը ենթակա բողոքների մի մասի դեպքում հաճախորդները նախապես դիմած չեն եղել ֆինանսական կազմակերպություններին. նման դեպքերում Գրասենյակի աշխատակիցները հաճախորդներին օգնել են գրել բողոք-պահանջներ:

Հաշտարարի քննությանը ենթակա բողոքների մի մասն էլ բավարարվում են կազմակերպությունների կողմից՝ բողոք-պահանջների հիման վրա՝ առանց Գրասենյակ պահանջ-դիմում մուտք անելու. լինում են նաև բողոքներ, որոնց նախնական ուսումնասիրությունից հետո Հաճախորդին խորհուրդ է տրվում պահանջը չհանձնել քննության, քանի որ բացակայում է Հաճախորդի՝ որպես սպառողի շահերի ոտնահարման փաստը:

01-04-2021 - 30-04-2021թթ. Հաշտարարի գրասենյակը քննության է ընդունել 577 պահանջ-դիմում:

<b>Գրասենյակ ներկայացրած բողոքների քանակ (հատ), որից՝</b>	<b>1,334</b>
<b>Վերաբերում են ֆինանսական համակարգին՝</b>	<b>1,283</b>
1. Ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից	107
2. Ենթակա են քննության Հաշտարարի կողմից	1,176
2.1 Ընդունվել են քննության, ուղղված են՝	577
2.1.1. Բանկերի դեմ, կապված են՝	159

• Վարկային գործարքների հետ	104
• Ավանդային գործարքների հետ	49
• Վճարահաշվարկային գործարքների հետ	6
<b>2.1.2. Ապահովագրական ընկերությունների դեմ, կապված են՝</b>	<b>402</b>
• Մեքենայի ԿԱՄԿՈ ապահովագրության հետ	6
• Գույքի ապահովագրության հետ	1
• Առողջության ապահովագրության հետ	8
• ԱՊՊԱ-ի հետ (ներառյալ՝ Բյուրո)	387
<b>2.1.3. Վարկային կազմակերպությունների դեմ</b>	<b>15</b>
<b>2.1.4. Դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների դեմ</b>	<b>1</b>

<b>Քննության ընդունված պահանջների ելքեր (հատ դեպք)՝ [1]</b>	<b>633</b>
Պահանջը բավարարվել է հաշտեցման միջոցով	249
Պահանջը մասնակի է բավարարվել	49
Պահանջը բավարարվել է	16
Պահանջը մերժվել է	254
Պահանջի քննությունը դադարեցվել է	41
Պահանջի քննությունը մերժվել է	24

Հաշտարարի գրասենյակ կարելի է դիմել՝ զանգահարելով (374) 60-70-11-11 հեռախոսահամարով կամ այցելելով Մ. Խորենացու փող., 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 7-րդ հարկ: E-mail: info@fsm.am . Web: www.fsm.am

1 Հաշվետու ժամանակաշրջանում հանգուցալուծված պահանջ-դիմումների ելքեր